ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԴՐԱՄ
ՂՐԿԵԼՈՒ ՀԱՍՑԷ
M. BENIARD
Poste Restante
Londres. [Angleterre].

Ամեն բան ժողովրդի միջոցով, ժողովրդի կամքով և ժողովրդի համար

Իւրաքանչիւրի և ընդհանուրի հաւասարապէս բարեկեցիկ կեանք — դա է ճշմարիտ ազատութիւն



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՄԵՆ ՏԵՂԵՐԻ ՀԱՄԱՐ
ՏԱՐԵԿԱՆ· · · · · · 5 Գրանկ.
ԿԷՍ ՏԱՐԻԱՆ· · · · 3 „
ՄԻ ՀԱՄԱՐԸ· · · · ½ „

Ժողովուրդ, դու ինքդ միայն կարող ես ձեռք բերել քո ազատութիւնը։

Արեան ճահիճներ — ահա՛ ազատութեան ճանապարհը։

Ժողովուրդ, մի աղերսիր, այլ պահանջիր և ձեռք բեր։

ԵՐԳԻԾԱԲԱՆԱԿԱՆ–ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ | ԼՕՆԴՕՆ | Nr 8 ԴԵՏԿԵՄԲԵՐ Nr 8 | 1894 | ՄԻԱՄՍԵԱՅ

ԹԻՒՐՔԻԱՆ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ։

ՀԻՒԾԴ ՄԱՐԴ, ՀԱՅԵՐԻՆ ԵՍ ԿՈՏՈՐՈՒՄ, ԲՈՑՑ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՆՆ ԴԱՄՈԿԼԻՍԻՆ ՍԱՒԻՐԸ ԵՒ ՔԱՋԵՐԻ ԳԻՐԿՆԵՐԸ ՔՈ ՄԱՀՎ ԵՆ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ....

BES 17.1.96 8-9 V



ԽԵՂԿԱՏԱԿՆԵՐԻ ԱՄԲՈԽ

Նրանք կռւում էին Սասունում, Նրանք, որոնց այնպիսի արհամարհական կերպով "կրթված, ինտէլիգէնտ" հայերն անւանում էին "կիսավայրենի, տգէտ Սասունցիներ"։ Նրանց առաջնորդ և Նրանց հետ կռւող էին թշնամու դէմ նաև ուրիշները, որոնց մեր ինտէլիգէնտները չէին կարող տգէտ ու կիսավայրենի կոչել, բայց որոնք բարձր ուշադրութեան արժանի չէին համարւում, որովհետեւ Նրանց անունն էր Հնչակեան։

Եւ այդ երկուսն, Սասունցին և Հնչակեանը, մենակ էին կռւի մէջ։ Նրանք կռւում էին թըշնամու դէմ իրանց սրով ու հրացանով, որ ինչքան կարողացել էին՝ ձեռք էին բերել։ Բայց աւելի ճշմարիտ կը լինի ասել, որ Նրանք կըռւում էին առաւելապէս իրանց բարոյական ուժերով, քան նիւթական։

Նիւթակա՞ն ոյժ… Նրանք, երկու տարւայ ընթացքում, օգնութիւն աղերսեցին հայերից՝ մեր ինտէլիգէնտներից մասնաւորապէս…. Հայ ինտէլիգէնտները մեր ընկեր Մուրատներին գրեթէ վռնտեցին իրանց տներից, և նա գլխիկոր վերադարձաւ Սասուն։ Վռնտեցի՞ն… այո՛, որովհետեւ Մուրատները Հնչակեան էին, որ խօսում էին յանուն կենդանի գործի և կենդանի գործնական աջակցութիւն էին ուզում… Աջակցութի՞ւն, օգնութի՞ւն, որո՞նց… Հնչակեաննե՞րին… թէկուզ էլ դրանք Սասունի և ամբողջ հայ ժողովրդի մէջ մտած գործում են ու արիւն թափում և ժողովրդի կողմից խօսում… Երբէ՛ք…

Այո՛, երբէք. այդ էր հայ ինտէլիգէնտների պատասխանը մեր Մուրատներին ու Սասունցիներին… Եւ սրանք մնացին անօգնական. արին այնքան, որքան կարողացան և արածը շատ էր… մեծ էր….

Մեր այդ խօսքերի վրայ հեգնական ժպիտ է երեւում մեր խ ո ր ա մ ա ն կ ինտէլիգէնտների երեսի վրայ… Բայց ինչո՞ւ… Ինտէլիգէնտ, հէ՛ ինտէլիգէնտ ես, և քո երեւելի և աներեւոյթ մեծ յատկութիւններդ ոչ ոք քեզնից չէ խլում … Թերեւս խլելու էլ բան չէ… բայց դու ինքդ չե՞ս արդեօք, որ այսօր, Սասունի դէպքերից յետոյ, հերոս ես անւանում "վայրենի" Սասունցիներին, "անուանի, հերոս, նշանաւոր" ես անւանում Հնչակեան Մուրատին….

Այո՛, ճիշդ է. դա էլ քո երեւելի յատկութիւններից մէկն է. — շահագործել քո փառքիդ ու հռչակիդ համար ուրիշների գործերը, ուրիշների անձնուէր գործունէութիւնը, ուրիշների արիւնը… Քո եւ քեզ նմանների հանած աղմուկն այնքան մեծ է Սասունի հերոսութիւնների առիթով, որ կարծես թէ այն դու եւ քեզ նմանները չէին, որ դեռ երէկ խուլ էին դէպի Սասունցիների օգնութեան աղաղակը և իրանց տանից էին արհամարհական կերպով վըռնտում Հնչակեան Մուրատին….

Այն ժամանակ, երբ Հայաստանցին ու Հընչակեանը պատրաստութիւններ էին տեսնում կռւելու, դուք Նրանց արհամարհելի էիք համարում և ատելութիւն զգում… Ձեր տեղերը տաք էին, այնպէս չէ՞… Այն ժամանակն էլ, երբ Հայաստանցին ու Հնչակեանն անթիւ թշնամիների դէմ անհաւասար կռիւ էին մըղել, մի կռիւ, ուր Նրանք ընկան հերոսաբար, դուք Նրանց օգնութեան հասնելու համար մի րոպէ էլ չը մտածեցիք, ձեր բոյնն էիք մտել՝ վախեցած… Իսկ այսօր, երբ Սասունցիները և այնտեղի Հնչակեաններից կոտորված և կամ ձերբակալված են, դուք այնպիսի դիրք էք բռնել և այնպէս էք խօսում ու պոռում, որ կարծես թէ օրւայ հերոսները դուք լինէք, Սասունի քաջերը դուք լինէք, Հայաստանն ազատողը դուք լինէք… Մինչդեռ ձեր նոյն տաք տեղից մի քայլ հեռու չէք արել և մի րոպէ չէք մտածել ձեր պարտականութիւնների մասին… Եւ Սասունցիի դիակի ու Հնչակեանի ճակատներից դուք պոկում էք Նրանց փառքի պսակը և զարդարում ձեր անարժան գլուխները….

Ա՜հ, տխուր խեղկատակնե՛ր ամբոխ… Ցիրաւի, խորամանկ էք, լաւ դիրք էք ընտրել ձեզ համար. ոչինչ չանել, գործողներին քննադատել ու հալածել և վերջը նոյն գործողների արեան ու մահի գնով ամեն բարոյական վայելք ու հռչակ ձեռք բերել…

Եւ վաղը, եթէ նոյն այդ արեան ու մահի գնով Հայաստանն ու հայ ժողովուրդն ազատ շունչ քաշեն, դարձեալ դո՞ւք էք, այնպէս չէ՞, որ ամեն բան ձեր ձեռքը կը գցէք և կրկին կը սկսէք արհամարհել այն ժողովրդին ու գործիչներին, որոնց այսօր, թէեւ հակառակ ձեր ներքին ցանկութեան, ստիպված էք գովել եւ ճանաչել Նրանց անսահման անձնազոհ ոգին…

Ա՜հ, տխուր խեղկատակնե՛ր ամբոխ… Աղմըկեցէք, պոռացէք, ձեզ առաջ մղեցէք… Ճըշմարիտ գործիչների համար չէ ներկայ ապականված աշխարհը, այլ ձեզ նման աֆէրիստների (վարպետորդիների) համար, որ գիտեն ամեն բան լինել, պարագաներին յարմարվելով… Վայելեցէք, ուրեմն, վայելեցէք… Կը վայելէք սակայն այնքան ժամանակ, մինչեւ որ ժողովուրդն ինքն իր տէրը դարձած՝ խայտառակութեան պատմական տախտակի վրայ կարձանագրէ ձեր անունները….

Ա՜հ, խեղկատակնե՛ր ամբոխ….

ԱՐԵՒԱԾԱԳԻՆ

ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

ՆՈՒԷՐ ՏԻԿԻՆ Մ. Ն…ԻՆ.

(Շարունակութիւն) *)

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

I

ՕՐՒԱՅ ԽՆԴԻՐԸ

Ի՞նչ կրնաս ըսել, կրկնեց Մօսիկին Գրիգորը։

— Տէր մեղա՜յ Աստծու, կանչեց պառաւը ցընցվելով, որ նստած՝ իր տէրողորմեայի հատիկները քաշելով, աղօթք էր կարդում։ Նա արագ-արագ մի քանի անգամ խաչակնքեց իր երեսը եւ նալլէթ կարդաց սատանային։

— Պապի, տուր տեսնամ դա թուղթերը։ Ա՜խ, աչքը սիրեմ եէկէնիս, աւելացրեց նա, — ղօչաղ տղայ է, ղօչաղ. Երեւոյթով էնքան խեղճուկ կերեւնայ, որ մարդ բան մ'էլ չը յուսար. քալած ժամանակ ոտքերն անպէս վզըշ կը դնէ, որ չըլլայ թէ սխալմամբ զարընջայի (մրջիւն) մը վրան կոխէ. ամմա իր բանը գործն էլ լաւ գիտէ. պէտք եղած ատեն ձեմքեանի գրասեղանի մէջէն աս տեսակ թուղթեր կը քաշէ՝ կը հանէ։ Ախ, աչքերըդ սիրեմ, Արէս… Տղայ չէ, հոգի է, հոգի՛․․ Յետոյ յարեց. — Ա՛ Պապի, հոգիդ սիրես, շուտ արէ։

Պապին վար առաւ իր խոշոր փաթաթոցով գլխարկը, Նրա վրայից քակեց երկու-երեք թօքամթի գիւլէնդ, յետոյ մէկի ծալքը բանալով, դուրս հանեց մի փոքրիկ ծրար թուղթ եւ տվեց Միրզանին։

— Ա՛ռ, Գալօ, ասաց Միրզանը, դու մեր ամենէն լաւ կարդացողն ես։ Եւ իրաւ որ Գալօն բաւական զարգացած երիտասարդ էր։ Նա կարդացել էր տեղային ջեզուիտների բարձր ուսումնարանում, սովորել էր հայերէն, տաճկերէն և գաղիերէն լեզուները։ Նա այժմ զբաղվում էր իր անձնական գործերով։ Նա վերցրեց թուղթը եւ բանալով՝ սկսաւ մէկ ակնարկ գցել Նրա վրայ։

— Ա՛, թիւրքերէն է եղեր, ասաց նա ինքն իրան. կերեւի պաշտօնական է։

— Դէ՛, շուտ արա, Գալօ, ասում էին նստողները, հետաքրքրութիւնից անհամբեր շարժումներ անելով։

Գալօն սկսեց կարդալ։ Նրա կարդացածը հետեւեալն էր.

"Բէկ էֆ., դուք ինձ յանձնել էք այն պաշտօնը, որ ինձ համար ամենից սիրելին է։ Ես ուզում էի մի կարեւոր ծառայութիւն մատուցանել կառավարութեան, միաժամանակ եւ ձեզ՝ ձեր դէպի ինձ ունեցած բարեկամական սիրոյ համար։ Իմ ազգն ինձ չէ սիրում, բայց ես էլ լաւ գիտեմ իմ վրէժը Նրանից լուծել և այդ պատիժը սուղ կը նստի իրան։ Բէկ էֆէնդի, աղաչում եմ, մի կարճ ժամանակւայ համար շատ ցուրտ վերաբերվել դէպի ինձ, մինչեւ որ ես իմ գործը կարգադրեմ և անց ու դարձերի ճիշտ եղելութիւնը ստուգեմ։ Հարուստների մասին ձեզ տված խոստումներիս վրայ եղէք։ Մենք կարող ենք տեսնվել գիշերները ձեր ուզածին չափ. Գահվէջի Օմար աղայի կաղինոյի պստիկ սենեակներից մէկն ամենալաւը եւ յարմարն է։

3 փետրվար 93. Ճէմք."

Մէկ ուրիշ նամակի մէջ նա գրում էր.

"Երէկ տեսայ Նրան, Սաթինիկին. միշտ միեւնոյն յամառութեամբ մերժում է. ամեն խոստում Նրա համար կարեւորութիւն չունի, մինչեւ անգամ նա ինձ սպառնալիքներ կարդաց… Բէկ էֆէնդի, լաւ պատառ էք ընտրել, բայց հաւատացնում եմ ձեզ, որ շատ էլ հեշտ չէ այդ պատառը ձեռք գցել։ Իրաւ, դուք Նրան կարող էք բռնի յափշտակել, ինչպէս էլ առաջարկում էիք, բայց դա վերջը մեծ աղմուկ կը յարուցանէ։ Ես մտածել եմ մի շատ դիւրին միջոց. բանտ նստացնել Նրա ամուսնուն։ Կինը խենթի պէս սիրում է Նրան։ Դրանով միայն կարող ենք հասնել մեր նպատակին։ Ծանր պարագաների տակ պատրաստ եմ ձեզ օգնել։

20 մարտ 93. Ճէմք."

Մէկ ուրիշ նամակում.

"Այսօր նա տնից դուրս գնաց. մինչեւ երեկոյ դաշտից չէ վերադառնալու։ Հասանը գազեաղն եւ փալասի կտորները պարտէզի պատից ներս կը տայ։ Ես էֆէ Օսմանին ուղարկել եմ, որ թագ կենայ պարտէզի անկիւնում։ Նա ներս ընդունելով, ամեն բան կը գցէ Փաբրիգայի այն մասում, ուր կան փայտաշէն գործիքներ եւ վառելի փայտեր։ Կրակը տալուց յետոյ նա դուրս կը գայ պարտէզից. Նրան ոչ ոք չէ կարող նշմարել, այսօր տօնի օր է եւ հայերն ամենքն էլ սահրայի ելած են. փողոցներում շուն անգամ չի գտնվիլ։

Ճէմք."

Ներկայ եղողները բոլորն էլ գունատվել էին։ Նրանց դէմքերն արտայայտում էին ծայրայեղ զայրոյթ ու կատաղութիւն։ Ցանկարծական կերպով առաջացած բարկութիւնը պապանձեցրել էր ամենքին։ Միայն ծերունի Մարտիրոսը մէկ ինչ-որ հայհոյութիւններ էր մրթմրթում, անհանգստութեամբ դողդոջուն ձեռքերով իր չիբուխի ղ ա լ օ ն ը լցնում եւ միեւնոյն ժամանակ երբեմն-երբեմն վեր էր առնում իր ձեռ-

*) Տես "Ապտակ" Nr 7.



ՄԱՐՏԻՉԸ

Մարտիչըն իրեն հրացանն ու զէնքը
Արագ կը մաքրէր,
Աչքերէն կամաց կհոսէր արցունքը,
Սիրտը կը կտողէր:

—Մարտիչ, ի՞նչ է, որ այդպէս խընամքով
Կը պատրաստես դու:
—Մահ մը ինձ համար իմ բարի կամքով,
Մահ քաջ ու ազդու:

—Խրաւունք, օրէնք, կայք, հող և այլ ինչ,
Ծիծաղ ու ժըպիտ
Չունի՞ս դու միթէ, որ ապրիս: —Ոչինչ.
Լոկ ձեռներ ու սիրտ:

—Մարտիչ, ի՞նչ է քո զէնքիդ խորհուրդը,
Ուրիշին կա՞յ մահ:
—Իր վրէժը կառնէ հայ ժողովուրդը
Վատէն անխընայ:

—Բայց կնկադ մոռցա՞ր, զաւակդ սիրական...
Ո՞վ պիտ պահպանէ:
—Կնկաս պատիւը, զաւկիս ապագան
Դաշոյնիս ծայրն է:

—Ի՞նչով կը լեցնես քո սիրած հրացան
Ունե՞ս դու վառօթ:
—Այնտեղ կը լեցնեմ սեւ թըշուառութեան
Ու ցաւերիս բօթ:

—Մարտիչ, ի՞նչ է քո անուն ու կոչում
—Ցանջանք, սով, վըրէժ:
—Ո՞վ է պատճառը ողբիդ անհատնում:
—Բռնակալքը գէշ:

—Աժդ ի՞նչ արիւն է ճակատիդ վըրան:
—Ամօթի արիւն:
—Ի՞նչ կը սրբէ այն: —Իմ հերոսական
Նահատակութիւն:

—Ի՞նչ է քո իղձըդ: —Կռիւ սոսկալի
Թշնամիի դէմ:
—Կը յաղթե՞ս նորան: —Թէ յաղթուիմ, կեանքի
Ա՛լ փափագ չունեմ:

—Ինչպէ՞ս կը կուես: —Եռանդ, հոգի, սէր,
Իմ արցունքները
Մէկտեղ կը խառնեմ... —Ո՞վ է քեզ ընկեր:
—Ինձ նըմանները:

—Ո՞ւր քո հայեացքըդ անշեղ կը նայի:
—Խորն ապագայի:
—Ի՞նչ կը տեսնես հոն...—Մահ ինձ պէսներուն
Եւ ազատութիւն իմ եղբայրներուն:

25 դեկտեմբերի 94. ԽԵՆԹԸ.

ԴԷՍ ՈՒ ԴԷՆ

“Ըպտակի„ լրաբերի միջոցով հետեւեալ տեղեկութիւնը մեզ հասաւ Ամերիկայից.—

“Նիւ-Եօրք թերթ մը կայ, որ չեղած լեզուով մը կը գրէ. իր անունն է “Հայք„, որ ամեն բան է, բայց հայք չէ ամենեւին: Ատոր հոգեւարքի մէջ ըլլալը (ազգային մեծ սուգ մը անկասկած) լսած լինելով, Ուստր քաղաքի՝ ամեն բան թաղելու պատրաստ՝ հոգեւոր հայր Տէրունեանը հրաւիրուած էր հաղորդութիւն տալու մեռնողին: Բայց Տէրունեանը խեղճ “Հայքին„ կուզէ անհաղորդ թողուլ, որովհետեւ անոր խմբագիր Գաբրիէլեանը բողոքական է: Ատոր վրայ մեծ վիշտ մը զգացած է այս վերջինս, տեսնելով, որ այդ կերպիւ արքայութեան դուռն այլ եւս իրեն համար գոցուած պիտի համարել... Մինչդեռ Տէրունեանի աղօթքներու շնորհով դժոխքին արժանացած դժբաղդ խմբագիրը ո՞րքան ջանքեր թափեց այս վերջին տարիներու մէջ համակրելի երեւնալ լուսաւորչականներուն: Խեղճն այսօր լաւ համոզուեցաւ այլ եւս Տէրունեանի եւ այլ լուսաւորչականներու խաւարական ըլլալուն եւ ինքն ալ բողոքական լինելով, ատոր դէմ ալ բողոքեց....„

***

Կովկասից մեզ գրում են.—

“Խլուրդները ծանօթ արարածներ են. . . Բայց երկոտանի խլուրդներն անծանօթ էին. այսօր նրանք էլ իրանց գոյութեան իրաւունքն են պահանջում: Մերթ դրօշակեան, մերթ դաշնակցական եւ մերթ էլ ոչինչ ածական չը կրող անձերն այս կողմերում բաւական աչքող մրցման մէջ են գտնվում աչա տարիներից ի վեր. . . Հնչակեան անունը երբ նրանք լսում են, անմիջապէս նրանց մազերը բիզ-բիզ են կանգնում, նրանց սպառնում է խելագարութիւնը: Եւ նրանք խլուրդների պէս պահված են մնում իրանց խորշերում այնքան, որքան ժամանակ քիթ քթի չեն հանդիպում Հնչակեաններին Կովկասի հրապարակի վրայ: Բայց հէնց որ այս վերջինները դժբաղդութիւն են ունենում մի կերպ ճանաչվել ու երեւան գալ, անմիջապէս խլուրդները դուրս են թափվում իրանց ծակերից եւ սրբազան հալածանք են մղում այդ անիծեալ Հնչակեանների դէմ, խանգարում, վնասում են նրանց, մինչեւ որ Հնչակեանների հեռանալովը մեր խլուրդներն էլ նորից անհետանում են իրանց վայրերը: Նրանց գործունէութիւնն է եւ երդվեալ պարտականութիւնը Հնչակեաններին հալածել և ոչ մի գործ չանել, բայց գրաւած ունենալ (եթէ այդ էլ գէթ կարողանային) Կովկասեան հայ հրապարակը:„

***

Մեզ հարցնում են, թէ ինչպէս է պատա-

քըն ու սպառնական շարժումներ անում:

—Քա՛, կրակ մը տուր, ասաց նա դառնալով մամիին, եւ յետոյ յարեց.— ախըր զէման էվլատի է, ախըր զէման (աշխարհի վերջին զաւակներից)... „տատասկէն թուզ չի քաղուիր եւ փուշէն էլ խաղող„, ասաց Քրիստոս: Ծո՛ հէյ անպիտան մարդ, մէկ անգամ մտածէիր, թէ ո՞վ է Ջատիկին Գրիգորը, եւ խեղճը ի՞նչ արեր է քեզ. նա կիծ չունեցող մեղու մ'է, ինքն իր հալին մաքենիստ մը: Աստուած խելք է տվեր, աշխատեր է եւ ունցածը-չունցածը ծախսելով, աթաշ-տէյիրմէնի (կրակի ջաղաց) մը առաջ բերեր է: Որչափ սեւսիրտ, որչափ գաղան ըլլալու է մարդ, որ ադ տեսակ գիշեր ցորեկ իր գործին ետեւէն եղող եւ ուրիշին քիթը չարունող մարդուն ֆաբրիկան կրակի տալ տայ: Սիկայ էտէպսիզ (անբարոյական) փեզէվէնկ (կաւատ)... կրկնեց նա մէկը միւսի ետեւից, շուտ-շուտ մի շարք հայհոյութիւններ դուրս տալով եւ սրանով իր բարկութիւնը մի քիչ մեղմացնել աշխատելով. յետոյ աւելացրեց.— աշխարհիս վերջը հասեր է, չը գիտեմ թէ ի՞նչ պէտք է անել...

—Պապի, „դինսըզա իմանըզ կէրէք“ (անկրօնին անհաւատ հարկաւոր է), կըսեն թուրքերը. շատ էլ լաւ գիտենք թէ ինչպէս առաջքն առնելու է այդ անպիտանին...

—Իրաւ ես, ամմա, եավրում, օխը եայէն (նետն աղեղից) ելլելէն վերջ ախ ու վախը օգուտ չունի: Տես էսօր Սաթինիկի էրիկ Արտաշը երեք չորս ամսի չափ է, որ բանտն է, մինչեւ օրս պատճառը հասկցված չէր եւ չէր էլ հասկցվիր, եթէ թոռս Արէսը չըլլար: Մարդ որքան հայվան (անասուն) ըլլալու է, որ իր դրացիին կնիկը, իր մօտ ազգականին կնիկը շուներու ձեռքը ձգելու համար, անոր էրիկը բանտը դնել տայ: Ով ինչ գիտէ ինչե՛ր չեն բերեր էդ բէկ էֆէնդի ասված նազըմի անօթի շուները ադ զաւալլը (խեղճ) մարդուն գլուխը: Ցանցանքը՞... յանցանքը գեղեցիկ կնիկ ունենալն է: Բանըրնիս բուսած է: Աս մօրուքը ճերմկցուցինք որ աս օրե՞րն ալ տեսնենք: Հաւատացէք, եէնիչէրիներն ասոնցմէ շատ աղէկ էին. մէրտ էին, ամեն բան էշկերէ կընէին, մարդ առաջէն կը գիտնար եւ կզգուշանար. հիմա սատանայի զաւակ են դարձեր, ամեն բան գաղտուկ, քէօշէներու մէջ կընեն կա. “Թիւֆէնկ իճատ օլտու, մէրտլիկ բօզուլտու„ ասեր է Քէօռ Օղլին. հիքմէթին մէմուրները (կառավարութեան պաշտօնեաները) քանի որ շատցան՝ մեր գլխուն փորձանք դարձան, ամենին էլ կամքը շինելու է, ամենն ալ անօթի գայլերի պէս էհալիին (ժողովրդին) վրայ թափած են. մէջքը թուր մը կապողը թսլըլու վէզիր դարձած է. իսկ մեր թագաւորին հոգն անգամ չէ. անոր համար աչուր աչքիկներ պէտք են, որ իր սարային մէջ օյիններ խաղայ: Քանի մը օր առաջ Ղազ-Օվացի չէրքէզ Իճըրղօն իր աղջիկն առած թագաւորին հէտիէ (ընծայ) կը տանէր կա. վաղը ադ բուրդ գըլուխն էլ նշան մը կախած կուգայ եւ եթէ առաջ գաղտուկ աւազակ էր, հիմա բացէ ի բաց կըսկսի աւազակութեան: Է՛, եաւրունէրս, հառաչեց նա, ապրեցէք որ շատ բաներ տեսնէք. թէ որ ադ շունն էլ ողջ մնաց, դահա շատ օյիններ կը խաղայ մեր գլխուն: Այսօր կարգը Ջատիկին Գրիգորին, Արտաշին էր, վաղն էլ իմ ու քուկ է... Ծերունին լռեց և սկսաւ պինդ պինդ իր չիբուխը քաշել, միաժամանակ ուժով և խեղդըված ձայնով էլ հազալ:

Ծերունի Մարտիրոսի խօսքերը կարծես իւղ էին թափում արդէն բորբոքված երիտասարդների վրայ: Նրանցից մի քանիսները կատաղութիւնից իրանց շրթունքներն էին կծոտում, իսկ մի քանիսները խոր մտածում էին: Սամին նըստած իր տէրողորմեաի հատիկներն էր քաշում, աղօթում եւ խաչակնքում:

—Ես լաւ գիտեմ, թէ ինչպէս պէտք է վերջացնել մեր հաշիւը ադ անպիտանին հետ, ասաց Միրջանը, առժամանակեայ լռութիւնը կտրելով, առանց իջեցնելու իր ձայնի աստիճանը.— մէկ ղուրշուն, Պապի, մէկ ղուրշուն և անոր բանը կը լմննայ:

Միրջանն ամբողջ մարմնով դողում էր. Նրա դէմքի վրայ նշմարվում էին քրտինքի խոշոր կաթիլներ, որ վայր էին գլորվում. Նա անհանգըստութիւնից վեր թռաւ իր տեղից եւ սկսաւ ման գալ. կարծես նրա աթոռի վրայ փուշեր շարված լինէին: Մամին իր աչքի տակից դիտում էր նրան և Աստուծուց խելք խնդրում:

—Լա՛ւ, լաւ, միջամտեց Գալօն, թըղթի կտորները սեղանի վրայ դնելով.— մի ադքան դու քեզ տանջեր, Միրջան. մարդ քիչ մ'ալ պաղարիւն ըլլալ պէտք է, լաւ գիտես թէ ադտեղ մեզի համար գործ չի կայ. մենք պէտք է դիմենք ընկերութեան. անոր կը ղրկենք ադ թուղթերը. Նա մեր ամենէն էլ աղէկ կը վերջացնէ գործը, փիրն ու փաքը կը հանէ:

Միրջանը մի քիչ աղ ստ շունչ քաշեց. կարծես նա մինչեւ այդ ժամանակ մոռացած լինէր ընկերութեան անունը, այժմ նա ինքն իրան թեթեւ էր զգում. Նա, ինչպէս եւ իր միւս ընկերները, լաւ ճանաչում էին ընկերութեան զօրութիւնը, այնպէս որ նրա անունն արտասանվելիս՝ մի պատկառանք տիրեց ամեն մէկի դէմքի վրայ:

(կը շարունակվէ) Վ.Ի.Թ.

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՍՆԱՒՈՐԱՊԷՍ ՀԱՅ ՄԵԾԱԽՕՍ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԸՆԹԱՑՔԸ ԵՒ ՍԱՍՈՒՆԸ.



ՍԱՍՈՒՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԷՐ ԿՌՈՒԵԼՈՒ, ԻՍԿ ՆՐԱՆՔ ՓԱԽՉՈՒՄ ԷԻՆ ՆԱՊԱՍՏԱԿԻ ՊԷՍ·



ՍԱՍՈՒՆԸ ԿՌՈՒՈՒՄ ԷՐ ԵՒ ԱՐԻՒՆՈՎ ՀԵՂԵՂՎՈՒՄ, ԻՍԿ ՆՐԱՆՔ ՄԿԱՆ ՊԷՍ ԾԱԿ ԷԻՆ ՄՏՆՈՒՄ·



ԻՍԿ ԵՐԲ ՍԱՍՈՒՆԸ ԴԻԱԿՆԵՐՈՎ ԾԱԾԿՎԵՑԱՒ, ՆՐԱՆՔ ԱՌԻՒԾ ԿՏՐԵՑԻՆ··· ՈՐՈՎՀԵՏԵՒ ԱՄԷՆ ԲԱՆ ՎԵՐՋԱՑԱԾ ԷՐ ԵՒ ԸՆԿԱԾՆԵՐԻ ՓԱՌՔԸ ԻՒՐԱՑՆԵԼՈՒ ԲՈՊԷՆ ԷՐ ՀԱՍԵԼ·

հել, որ “Արմէնիան„ ինը տարուան թերթ լինելով, “քաղաքական, ազգային, և այլն, և այլն, և այլն„ օրգան Մ.-Փ...ի, չէ կարողանում Հայաստանից թարմ թղթակցութիւններ ունենալ, մինչդեռ “Դրօշակը„, որը նոյնքան կարճ ժամանակեայ գոյութիւն ունի, որքան սակաւ համար, եւ նոյնքան համար, որքան ծրագիր, յաջողում “Արմէնիայից„ աւելի թարմ թղթակցութիւններ ստանալ:

Հարցը պարզ է. “Ապտակն„ այդ հարցի պատասխանն իսկապէս թողնում է “Հնչակին„, որը կարող էր դրա առիթով շատ հետաքրքրքիր բաներ ասել: Մեր կողմից կասենք միայն, որ ամէն կողմ իր ոտքը կոխող մեր սատանայ լրաբերի ականջին գաղտուկ ու խորհրդաւոր կերպով փսփսացել են, թէ “Դրօշակը„ մաքուր աղբիւրից չէ ձեռք բերում իր մի կարգի թարմ թղթակցութիւնների հոսանքը. իբր թէ նա միջոցներ ու մարդիկ է գտել, որ “Դրօշակի համար... իւրացնում են “Հնչակին„ հասնելիք թղթակցութիւնները, մինչդեռ “Արմէնիան„ այնքան մենակ ու անճարակ է, որ “Դրօշակի„ մարդկանց պէս ճարպիկներ էլ չունի:

***

Սասունի դէպքերի առիթով հայ ջոջերն ու իրանք իրանց վրայ սիրահարուած հայ երիտասարդներից շատերն այնքան ազգասիրական կըրակ են կտրել, որ երկիւղ կրելով, թէ նրանք կայրվեն կը հալվեն, մենք հրապարակապէս առաջարկութիւն են անում՝ շուտափոյթ կերպով ազգային հրաշէջ մի մեծ գունդ կազմել այն ազգասէրների կրակը գոնէ մի քիչ մեղմացնելու համար:

***

Կ. Պօլսից մեր լրաբերը հաղորդում է հետեւալը.—

“Աւազակաց ընկերութիւնը մօտ օրերս նոր կանոն մը դրաւ, որուն համեմատ ամէն ետքը առեւտրական կամ ուրիշ տեսակ ամէն ծանուցում՝ տպագրուելէ առաջ պէտք է ներկայացուի գրաքննիչին հաւանութեան: Հայ կօշկակար մը անցեալ օր սա ծանուցումը խմբագրած էր, զոր ուղարկեց գրաքննիչին.—

ՀԱՅԿ ԴԻՄԱՔՍԵԱՆ, Ս. ՄԱԳՍՈՒՏԵԱՆ ԵՒ ԸՆԿ.

“Պատիւ ունին ծանուցանել իրենց յաճախորդներուն թէ Եւրոպայէն դեռ նոր բերել տուած են ամէն տեսակ կօշիկներ խիստ ձեւաւոր և աժան. կարժէ անգամ մը այցելել այս վաճառատունը՝ անձամբ համոզուելու համար անոր առաւելութիւններուն:„

Պարոն գրաքննիչին առաջին գործը եղաւ ջնջել ծանուցումին մէջէն վաճառատան գլխաւոր սեփականատիրոջ անունը, առարկելով թէ, “Հայկ Դիմաքսեան„ բացատրութիւնը քաղաքականութեան կը դպչի.... Յետոյ ջնջեց ծանուցումի վերջին մասը “կ'արժէ անգամ մի եւն.„ յայտարարելով որ վեհ. սուլթանը շէնքերու և հասարակաց վայրերու մէջ հ ա մ ա խ ը մ բ ու մ ն ե ր ը արգիլած է....

Աւելորդ է ըսել որ, այս պայմաններուն մէջ, ծանուցումը չը տպուեցաւ:„

***

Եւրոպական տէրութիւնների, մասնաւորապէս Անգլիայի պնդման պատճառով, սուլթանը ստիպվեցաւ յատուկ ցանձնախումբ կազմել իբր Սասունի դէպքերի քննութեան համար եւ ընդունել նաեւ անգլիական, ֆրանսիական ու ռուսական յատուկ պատգամաւորներ նոյն այդ նըպատակով...

Այդ առիթով Կ. Պօլսում մի քանի հայեր իրանց մէջ հետեւեալ խօսակցութիւնն են ունենում:

—“Ինչ բան է այդ թիւրքական ցանձնախումբը, հարցնում է մէկը:

—“Ուղարկուի սպաննած հայերու դիակները թաղելու, պատասխանում է երկրորդը:

—“Չէ, մէջ է մտնում երրորդը. Ցանձնախումբը պէտք է քննէ, թէ քանի թիւրք և քիւրդ սպանուեցան հայերու զէնքերէն, որ վերջը Եւրոպային հայոց գազանութիւններն ապացուցէ:

—“Այդ մասամբ ճիշդ է, յարում է չորրորդը. բայց սուլթանի հրամանով ցանձնախումբը պիտի ջանայ Սասունի կոտորածն ընող քիւրտերն ու թիւրքերը պաշտպանել և ամէն ծակեր մտցունել, որ եւրոպական պատգամաւորներն այն քիւրտերու եւ թիւրքերու երեսնին չը տեսնան: Որովհետեւ այդչափն ալ բաւ է, որ թիւրքն իր դատը կորսնցունէ:

—“Ամէնէն ճշմարիտը ես ըսեմ, յանկարծ բացականչեց հինգերորդը.—Սուլթանի ցանձնախումբը Ա ն ց ն ա խ ո ւ մ բ մ'է, այսինքն Հայաստանէն ա ն ց ն ո ղ խ ո ւ մ բ է, որ պիտի Սասունի քովով ա ն ց ո ւ ն է եւրոպական պատգամաւորները, թիւրքական շէրպէթներով ու շողքորթութիւններով ա ն ո ւ շ ա ն ց ո ւ ն է (անուշացունէ) անոնց: Իր գրպանն ալ ունի արդէն պատրաստի տեղեկագիր մը Սասնոյ կոտորածներու մասին, որով պիտի գ ո հ ա ն ց ո ւ ն է (գոհացունէ), կ ո յ ր ա ն ց ո ւ ն է (կուրացունէ) զԵւրոպան: Այդ տեղեկագրին պարունակութիւնն այս իմաստը պիտի անցունէ. “Քանի մը ստահակներ, յեղափոխականներ, չընգըրտագճիներ (չընգըրտագհնչակ) ժողովուրդը խաբելով, նետեցին թիւրք զօրքերու ու քիւրտերու սուրին ծայրերին: Ատոր փաստ ձեզ “Արմէնիան„ եւ ուրիշ հայ քանի մը թերթեր, որք նոյնը կը գրեն Հընչակեաններու մասին: Եւ ահա այն քանի մը անհաւատարիմ խընդըրները բռնելու համար էր, որ սուլթանը հրամայեց ռմբակոծել Սասունը, որը չէր ուզեր խռովարարները կառավարութեան տալ: Այսպէս, վերջապէս շնորհով վեհափառ սուլթանի 6,000 կոտորած ու խժդժութիւններ եղան Սասունի մէջ, եւ միայն այդպիսով կարելի եղաւ բռնել 20—25 խռովարարները, որք այսօր սուլթանի արդարադատութեան անողոք սուրին տակն են: Ահա այդ բոլորէն ետքն այսօր երկրին մէջ այլ եւս կարգ ու կանոն եւ կատարեալ խաղաղութիւն ու բարօրութիւն կը տիրէ...„ Ատոր վրայ Եւրոպան կը խնդայ եւ կը սքանչանայ Թիւրքիայի խելքին, որ ա ղ է կ պ ր ծ ա ւ եւ ծափահարելով անոր կըսէ անոր հետ միատեղ.—“Արթըղ բիթտի„....

ԼՈՆԴՈՆ· “ՀՆՉԱԿ„-Ի ՏՊԱՐԱՆ·